

«H. F. B. Lynche իր «Armenia»ի մէջ հետեւեալ գիտութիւնները կ'ընէ Համիտիէ գունդերու մասին :

«Համիտիէներու գլխաւոր կեդրոնը Մանազկերան է . կան երեսուն գունդ (régiment) . իւրաքանչիւր գունդը կը բաղկանայ 600 անուանական մարդերէ , բայց երբէք անոնք ի միասին մարզանք չեն կատարած : Երբ 1892 ին իւրաքանչիւր գունդէն ջոկատ մը զօրահանդէս (պարատ) կատարեց Էրզրումի մէջ , իմ տեղեկութեան համաձայն՝ անոնց թիւը երկու հազարի չը բարձրացաւ . և անոնք տխուր վիճակ մը ներկայացուցին թիւրք զօրավարին :

Թիւրք կառավարութիւնը քիչ պատճառներ ունի դո՛ւ մնալու Քրդերու մասին ունեցած փորձառութիւններէն , անոնց ներկայութիւնը երկրին մէջ ծայրայեղօրէն աղետաբեր է :

Քրդերը Ռուս-թիւրքական պատերազմի մէջ ունէ ղինուորական արժէքը մը ցոյց չը աուլին : 1829ի և 1854ի պատերազմներու մէջ քիւրդ շէֆերը մէկ տէրութենէն դէպի միւս տէրութիւնը հակեցան , և մինչև անգամ օգնեցին խուժող բանակներուն անցք տալով :

1877ին Քրդերը թրքական բանակի ամենէն վտանգաւոր տարրն եղան , և ինչպէս ակնհաստես մը կը վկայէ , ամենախոշոր անկանոն ձիաւոր բանակներն էին , որոնք բոլորովին անյարմար էին զիմադրութեան և պատերազմական լուրջ գործողութիւններու :

Իրենց ընթացքը հանդէպ վիրաւորներու և սպանուածներու՝ թրքական անուան արատ բերաւ :

Այս ամենը տակաւին չեն համոզած թիւրք կառավարութիւնը , ետ կենալու այս ժողովուրդը ղինուորական այդ ձևով կազմակերպելէ , որ երբէք չի կրնար կառավարութեան օգնել , մինչև որ անոնք չը կորսնցնեն իրենց ըմբոստութեան ուժը ու իրենք զիրենք օրէնքի հպաատակեցնեն :»

Միթիալունէն Աուստէմ Օրիէնդ (Տեղեկութիւններ Արեւելքէն) գերմանական ամսաթերթի մէջ կը կարդանք . (հրատարակուած 1904 նոյեմբերին. Ֆրանգֆուրթ . տետր 2րդ) :